

**«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիր
Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ (ՀՀ ԱՆ
ԱԾԻԳ ՊՀ) Հետաքրքրություն ներկայացնելու հրավեր
(Խորհրդատվական ծառայություններ-Անհատ խորհրդատուի ընտրություն)**

Վերնագիր: Անհատ խորհրդատու՝ շրջակա միջավայրի և սոցիալական պահպանման աջակցության հարցերով

Ծածկագիր: CR4/B-C/IC/037-21

Իրավասություն: Բոլոր խորհրդատուները, որոնք համապատասխանում են նշված պահանջներին

Սկիզբ: 15 Հունիսի, 2021թ.

Տևողություն: 12 ամիս, հնարավոր երկարացումով

Տեղակայում: Երևան, ՀՀ

Աշխատանքի նկարագիր: Սույնով ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն հրավիրում է Անհատ խորհրդատուի՝ շրջակա միջավայրի և սոցիալական պահպանման աջակցության և համակարգման նպատակով միանալ թիմին:

Աշխատանքային պարկատանություններ:

- Համագործակցելով թիմի մյուս անդամների հետ ապահովել ծրագրերում ընդգրկված առողջապահական հաստատությունների արդիականացման/շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատումը՝ համաձայն յուրաքանչյուր օբյեկտի համար մշակված Շրջակա միջավայրի կառավարման պլանների, նրանց համապատասխանությունը «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրում ընդգրկված Շրջակա միջավայրի կառավարման կառուցվածքին (EMF) և ծրագրով հաստատված Համաշխարհային բանկի շրջակա միջավայրի պահպանման քաղաքականությանը,
- Համագործակցելով թիմի մյուս անդամների հետ՝ ծրագրերում ընդգրկված առողջապահական հաստատություններում շահագրգիռ կողմերի հետ կազմակերպել տարեկան հանրային քննարկումներ ընթացիկ աշխատանքների իրականացման արդյունքների վերաբերյալ՝ ներգրավելով բնակչության խոցելի խմբերին:
- Իրականացնել այցելություններ ծրագրերում ընդգրկված առողջապահական հաստատությունների շինհրապարակներ՝ բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի, բողոքների լուծման մեխանիզմի և գենդերային բռնության ռիսկերի կառավարման համակարգման նպատակով:
- Գրանցել շինհրապարակ կատարած այցերի արդյունքները, բացահայտված բնապահպանական խնդիրներն ու առաջարկությունները, առկա խնդիրների լուծման առաջընթացը: Ապահովել ներկայացվող բնապահպանական մոնիտորինգի ամսական հաշվետվությունների որակը, ներառյալ լուսանկարները՝ ըստ մշակված ձևաչափի:
- Բողոքների լուծման մեխանիզմի կառավարում, ներառյալ ծրագրի շրջանակներում առաջացած սոցիալական, այդ թվում գենդերային, բողոքների/հարցումների գրանցումն ու արձագանքումը:

- Շինարարական աշխատանքներ իրականացնող Կապալառու կազմակերպության անձնակազմին ներկայացնել Վարքականոնագիրը, ապահովել անձնակազմի ծանոթացումը վերջինիս հետ:
- Շինարարական աշխատանքներ իրականացնող Կապալառու կազմակերպության անձնակազմի շրջանում գենդերային խնդիրների վերաբերյալ կազմակերպել դասընթացներ՝ ներկայացնելով պրեզենտացիա, ինչպես նաև իրականացնել գիտելիքի ստուգման հարցումներ դասընթացից հետո:

Պահանջվող որակավորում:

- Բարձրագույն կրթություն;
- Առնվազն 5 տարվա մասնագիտական փորձառություն բնապահպանության ոլորտում;
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, ինչպես նաև Անգլերեն և Ռուսերեն լեզուների մասնագիտական բավարար իմացություն;
- Microsoft Office, մասնավորապես WORD, EXCEL ծրագրերի գերազանց իմացություն:

Վարձատրություն: Մրցակցային

Դիմելու Գործընթաց: Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք ուղարկել իրենց ինքնակենսագրականները (CV) և ուղեկցող նամակները (cover letter)՝ procurement@healthpiu.am և info@healthpiu.am էլ. փոստերին, վերնագրում հստակ նշելով “Environmental and social specialist, CR4/B-C/IC/037-21”:

Սկսած: 17 Մայիսի, 2021թ.

Վերջնաժամկետ: 31 Մայիսի, 2021թ.

Կազմակերպության մասին: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ը հիմնադրվել է 1999 թվականին, իսկ պետական հիմնարկի կարգավիճակ է ստացել ՀՀ Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 765 որոշման համաձայն: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն աջակցում է ՀՀ Առողջապահության նախարարությանը և պատասխանատու է առողջապահական ծրագրերի ընդհանուր համակարգման, պլանավորման, կառավարման, վերահսկման, ներառյալ գնումների ու ֆինանսական գործառույթների իրականացման համար: **Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <https://healthpiu.am/> վեբ կայք:**